Հաստատվել է
«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի
2022թ. սեպտեմբերի 6-ի, №1 նիստում
գիտական խորհրդի նախագահ՝

_____ Սրբուհի Գևորգյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԽՈՒ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2022

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

I ԳԼՈՒԽ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ն) ՀՊՄՀ-ի ուսանողների, գիտահետազոտական գործընթացներին ներգրավված անձանց և հետբուհական-շարունակական կրթություն ստացողների (հայցորդ, ասպիրանտ, դոկտորանտ) կամավոր, ինքնակառավարվող համալսարանական միավորում է:

1.2 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ն ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքով, ՀՊՄՀ-ի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

1.3 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի կանոնադրությունը և նրանում կատարվող փոփոխություններն ու լրացումները կատարում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի ընդհանուր ժողովը, որը հաստատում է ՀՊՄՀ-ի Գիտական խորհրդը:

1.4 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ն իր նպատակների ու խնդիրների իրականացման համար համագործակցում է ՀՊՄՀ-ում գործող բոլոր մարմինների և ստորաբաժանումների հետ:

1.5 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի հարաբերությունները ՀՊՄՀ-ի մարմինների հետ կառուցվում են սույն կանոնադրությամբ, ՀՊՄՀ-ի գործող կանոնադրությամբ, ՀՊՄՀ-ի Գիտական խորհրդի և ռեկտորի որոշումներով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

1.6 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ն ունի պաշտոնական էջ ՀՊՄՀ-ի կայքում, իր խորհրդանշանը, կնիք, ինչպես նաև ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի ընդհանուր ժողովի որոշմամբ հուշամեդալներ, «ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի պատվավոր անդամ»-ի կրծքանշան և այլ հուշանվերներ:

1.7 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ն սույն կանոնադրության, ՀՀ օրենսդրության և միջազգային օրենքների շրջանակներում իրավասու է մասնակցելու տեղական և միջազգային մրցույթներին և դրամաշնորհային ծրագրերին: Ինչպես նաև կարող է համագործակցել և անդամակցել ՀՀ-ում կամ արտասահմանում գործող պետական և միջազգային կազմակերպություններին:

1.8 ՀՀ օրենսդրության սահմանած կարգով ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ն զբաղվում է հրատարակչական գործունեությամբ՝ հրատարակելով գիտական ամսագրեր, պարբերականներ, ժողովածուներ և այլ:

1.9 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի անվանումն է.

ա) հայերեն ամբողջական՝ «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողական գիտական ընկերություն»

բ) հայերեն կրճատ՝ «ՀՊՄՀ ՈՒԳԸ»,

գ) ռուսերեն ամբողջական՝ «Студенческое научное общество Армянского государственного педагогического университета имени Х.Абовяна»,

դ) ռուսերեն կրճատ՝ «СНО АГПУ»,

ե) անգլերեն ամբողջական՝ «Students scientific society of Kh.Abovyan Armenian State Pedagogical University»,

զ) անգլերեն կրճատ՝ «SSS ASPU»:

1.10 ՈՒԳԸ-ի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ ք. Երևան Տիգրան Մեծի 17, Խանջյան 5:

II ԳԼՈՒԽ. ՀՊՄՀ-Ի ՈՒԳԸ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նպատակը ուսանողների գիտական, հետազոտական-ստեղծագործական ներուժի բացահայտումն ու խթանումն է, գիտական-մանկավարժական գործունեության մշակույթի ձևավորումն:

2.2 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի խնդիրներն են.

ա) ձևավորել գիտական, հետազոտական գործունեությամբ հետաքրքրված ակտիվ, ուսանողական համայնք,

բ) ստեղծել համալսարանի ստորաբաժանումների և ուսանողների համար տեղեկատվական և հաղորդակցական հարթակ և ապահովել փոխգործակցություն,

գ) բարձրացնել գիտական գործունեության նկատմամբ հետաքրքրությունը,

դ) ներգրավել ուսանողներին համալսարանական նախագծերում և հետազոտական աշխատանքներում,

ե) նպաստել ուսանողների մտավոր, բարոյական և հոգևոր զարգացման պահանջմունքների բավարարմանը,

զ) կազմակերպել ուսանողների բարոյական, ազգային և համամարդկային արժեքների ձևավորմանն ուղղված միջոցառումներ,

է) խթանել ուսումնական գործընթացում հետազոտական ինքնուրույն աշխատանքին,

ը) աջակցել երիտասարդական նախաձեռնությունների և նախագծերի իրականացման գործընթացում,

թ) նպաստել ուսանողների և հետբուհական-շարունակական կրթություն ստացողների գրահրատարակչության գործընթացին,

ժ) նպաստել միջազգային գիտական և կրթական գործընթացներին ՀՊՄՀ-ի ուսանողական համակազմի մասնակցելուն,

ի) նպաստել հայ մանկավարժական մտքի ուսումնասիրությանը և խթանել նրա զարգացումն ու տարածումը,

լ) ձևավորել մանկավարժական մտածելակերպ:

2.3 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի գործառույթներն են.

ա) գիտական ու կրթական ուղղվածություն ունեցող ուսանողական գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինարների, գիտահանրամատչելի դասախոսությունների և այլ միջոցառումների կազմակերպելը,

բ) ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի անդամների շահերի ներկայացնելը պետական մարմիններում և բուհում,

գ) աջակցել ուսանողներին անկախ գիտական հետազոտությունների և գիտական աշխատանքի իրականացման կազմակերպչական գործերում,

դ) անցկացնել համալսարանական, հանրապետական և միջազգային գիտական միջոցառումներ,
ե) ապահովել ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի անդամների մտավոր սեփականության պաշտպանությունը և գիտական աշխատանքների հրատարակումը,
զ) խրախուսել և ներկայացնել ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի անդամների գիտական նվաճումները, հանրապետական և միջազգային մակարդակներում,
է) աջակցել ՀՊՄՀ-ի Գիտահետազոտական կենտրոնի աշխատանքներին, մասնավորապես՝ ուսանողական համակազմին վերաբերող ծրագրերում և միջոցառումներում,
ը) ապահովել ՀՊՄՀ-ի ուսանողների ակտիվ մասնակցությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և երիտասարդության ոլորտներում իրականացվող բարեփոխումների գործընթացներին,
թ) ՀՀ և արտասահմանյան ուսումնական հաստատությունների ուսանողական գիտական ընկերությունների և այլ կազմակերպությունների հետ համագործակցություն,
ժ) իր իրավասությունների սահմաններում ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Ընդհանուր Ժողովի որոշմամբ այլ գործառույթների իրականացում:

III ԳԼՈՒԽ. ՀՊՄՀ-Ի ՈՒԳԸ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

3.1 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի կառուցվածքը հետևյալն է՝



3.2 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի կանոնադրության նպատակներից և խնդիրներից ելնելով՝ ընդհանուր ժողովը կարող է ձևավորվել ժամանակավոր կամ մշտական հանձնաժողովներ, ակումբներ և այլ կառուցվածքային միավորներ:

3.3 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի կառավարման մարմիններն են՝ Ընդհանուր ժողովը, Նախագահների խորհուրդը, Գիտամեթոդական խորհուրդը, Նախագահը:

<u>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ</u>

3.4 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի բարձրագույն մարմինը ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Ընդհանուր ժողովն է, որի լիազորությունների ժամկետը 3 տարի է:

3.5 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Ընդհանուր ժողովը իր լիազորությունները իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ոչ պակաս, քան յուրաքանչյուր ուսումնական տարին առնվազն մեկ անգամ: Հատուկ դեպքերում նիստերը կարող են կազմակերպվել առցանց իսկ որոշումներ ընդունվեն հարցման կարգով:

3.6 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Ընդհանուր ժողովի նիստի կազմակերպման աշխատանքները համակարգում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահը կամ նախագահի պաշտոնակատարը և ղեկավարում նիստերը մինչև ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Ընդհանուր ժողովի նախագահ և քարտուղար ընտրելը:

3.7 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Ընդհանուր ժողովի նիստի առաջին հարցը օրակարգի հաստատումն է, իսկ օրակարգի հարցերը կարող են առաջադրել ընդհանուր ժողովից առաջ, նրա ցանկացած անդամ, որոնք ընտրում, համակարգում և ներկայացնում է հաստատման ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահը:

3.8 ՀՊՄՀ ՈՒԳԸ-ի Ընդհանուր ժողովը ձևավորվում է.

ա) ՀՊՄՀ-ի ՈՒԽ-ի նախագահից,

բ) ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի բոլոր գրանցված անդամներից,

գ)Եթե ՀՊՄՀ-ի որևէ ֆակուլտետից չկա ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի անդամ, ապա տվյալ ֆակուտետի դեկանի երաշխավորությամբ ներկայացված ֆակուլտետի յուրաքանչյուր 25 ուսանողների մեկական ներկայացուցիչ ուսանողներից կամ հետբուհական շարունակական կրթություն ստացողներից:

3.9 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Ընդհանուր ժողովը՝

ա) իրավասու է լուծել ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի գործունեության հետ կապված ցանկացած հարց,

բ) իր անդամներից, կամավոր, ինքնառաջադրման կամ առաջադրման տարբերակներով, բաց քվեարկությամբ ընտրում է Ընդհանուր ժողովի նիստերը համակարգող քարտուղար և նախագահ, իր գործունեության ժամկետին համապատասխան: Ընդհանուր ժողովի կամայական նիստում, մասնակիցների կեսից ավելի պահանջով կարող է վերանայվել և դրվել կրկին քվեարկության Ընդհանուր ժողովի նախագահի և քարտուղարի թեկնածությունները,

գ) որոշում է կայացնում ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի ընտրությունների անցկացման կարգի մասին,

դ) հայտարարություն է տարածում ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի ընտրության մասին, իսկ ընտրության օրը նշանակում ոչ շուտ, քան 20 աշխատանքային օրը և ոչ ուշ քան 25 աշխատանքային օրը՝ հաշված ընտրության հայտարարության հրապարակման օրվանից,

ե) նշանակում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար ոչ ավել քան մեկ ուսումնական կիսամյակ ժամանակահատվածով, եթե ի պաշտոնե համապատասխան փոխարինող պաշտոնակատար չկա:

զ) կազմակերպում և իրականացնում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի ընտրությունները, ըստ որի՝ նախագահ է ընտրվում նիստին ներկա ընտրության իրավունքով անդամների մեծամասնության քվեն ստացած թեկնածուն, արդյունքերը համարվում են հաստատված նիստի արձանագրության հրապարակման պահից, որը պետք է

անել ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրը։

է) որոշում է կայացնում ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ին անդամակցելու ձևի և կարգի վերաբերյալ

ը) ի գիտություն է ընդունում ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի տարեկան հաշվետվությունները,

թ) առաջարկություններ է ներկայացնում ՀՊՄՀ-ի ռեկտորին և գիտական խորհրդին,

ժ) հաստատում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի ընթացիկ և հեռանկարային ծրագրերը,

ի) կատարում է փոփոխություններ ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի կանոնադրությունում,

լ) ստեղծում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի կառուցվածքային միավորներ և հաստատում դրանց գործունեության կարգերը,

խ) որոշում է ընդունում «ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի պատվավոր անդամ»-ի կոչումներ շնորհելու մասին։

3.10 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Ընդհանուր ժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են անդամների ընդհանուր թվի ավելի քան 2/3(երկու երրորդ) մասը։

3.11 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ընդհանուր թվի մեծամասնությամբ։

3.12 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Ընդհանուր ժողովի արտահերթ նիստ կարող է հրավիրվել հետևյալ դեպքերում.

ա) ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի նախաձեռնությամբ,

բ) ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահների խորհուրդի 2/3 և ավել մասի նախաձեռնությամբ,

գ) Ընդհանուր ժողովի նախագահի և անդամների 1/2 և ավել մասի պահանջով։

ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

3.13 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահների խորհուրդը (այսուհետ՝ ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Խորհուրդ) ուսանողական գիտական ընկերության կոլեգիալ կառավարման մարմին է և իրականացնում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Ընդհանուր ժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի կառավարումը։

3.14 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի խորհուրդի անդամներն են՝ ի պաշտոնե,

ա) ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահը,

բ) Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերությունների նախագահները,

իսկ ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի աշխատակազմի ձևավորումից հետո, ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Խորհրդի անդամներ են դառնում նաև

գ) ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի օգնականները, փոխնախագահները և քարտուղարը,

դ) աշխատանքային խմբերի/հանձնաժողովների/ակումբների նախագահները։

3.15 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Խորհուրդը ի պաշտոնե ղեկավարում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահը։

3.16 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ, իսկ օրակարգը որոշում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահը։

3.17 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Խորհրդի նիստերը լիազոր են, եթե ներկա են անդամների 2/3(երկու երրորդ) մասը, իսկ որոշումները ընդունվում են բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնության արդյունքում։

3.18 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի ընտրությունից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, նախագահի առաջադրմամբ ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Խորհրդի նիստով ընտրվում և համալրվում են ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի վարչության հետևյալ պաշտոնները՝

ա) ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի փոխնախագահ՝ ֆակուլտետային ՈՒԳԸ-ների աշխատանքները համակարգող,

բ) ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի փոխնախագահ՝ հանձնաժողովների և ակումբների աշխատանքները համակարգող,

գ) ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի օգնական՝ քարտուղարության, մեդիահարթակների և լրատվության հարցերով,

դ) ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի օգնական՝ արտաքին կապերի և միջազգային համագործակցության հարցերով,

ե) ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի քարտուղար,

զ) ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի հանձնաժողովների, ակումբների նախագահներ։

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

3.19 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Գիտամեթոդական խորհուրդը (այսուհետ՝ Գիտամեթոդական խորհուրդ) ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի գիտական, հետազոտական և հրատարակչական գործունեությունը պլանավորող, համակարգող, ղեկավարող և համապատասխան որոշումներ ընդունող կոլեգիալ մարմին է։

3.20 Գիտամեթոդական խորհուրդ կարող է ստեղծել ֆակուլտետներում առանձին մասնագիտությունների գծով մասնագիտական խորհուրդներ, աշխատանքային խմբեր և ղեկավարել դրանց գործունեությունը։

3.21 Գիտամեթոդական խորհրդի նախագահ 3 տարի ժամկետով ընտրվում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Ընդհանուր ժողովի նիստով։ Իսկ Գիտամեթոդական խորհրդի նախագահի տեղակալ և քարտուղար նշանակում է գիտամեթոդական խորհրդի նախագահը։ Գիտամեթոդական խորհրդի նախագահի բացակայության ընթացքում աշխատանքները համակարգում է տեղակալը, իսկ վերջինիս բացակայության ընթացքում՝ քարտուղարը։ Նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ քիչ, քան չորս ամիսը մեկ անգամ։

3.22 Գիտամեթոդական խորհրդի կազմը ձևավորում է Գիտամեթոդական խորհրդի ընտրված նախագահը, իսկ հաստատում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահը։

Ի պաշտոնե խորհրդատվական իրավունքով գիտամեթոդական խորհրդի կազմում կարող են ընդգրկվել՝

ա) ՀՊՄՀ-ի Գիտահետազոտական կենտրոնի ղեկավարը ,

բ) ՀՊՄՀ-ի ֆակուլտետների գիտության հարցերով դեկանի տեղակալները,

գ) ՀՊՄՀ-ի համահամալսարանական ամբիոնների գիտության թեկնածուները կամ դոկտորները՝ ամբիոնի վարիչի ներկայացմամբ։

Գիտամեթոդական խորհրդի մշտական անդամներն են՝

դ) Գիտամեթոդական խորհրդի նախագահը, տեղակալն ու քարտուղարը։

ե) ՀՊՄՀ ՈՒԳԸ-ի նախագահը

զ) ֆակուլտետային ՈՒԳԸ-ների, հանձնաժողովների և ակումբների նախագահները,

է) Գիտամեթոդական խորհրդի նախագահի հայեցողությամբ կարող են ընդգրկվել այլ հրավիրյալ անդամներ։

3.23 Գիտամեթոդական խորհուրդը՝

ա) քննարկում է ՀՊՄՀ ՈՒԳԸ-ի գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները,

բ) լսում է հաղորդումներ ֆակուտետային ՈՒԳԸ-ներում իրականացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքների արդյունքների մասին և տալիս համապատասխան խորհրդատվություններ։

գ) հաստատում է ուսանողական գիտաժողովների և նստաշրջանների թեմաները, ընդունում որոշումներ դրանց իրականացման և բովանդակությանը վերաբերող հարցերի մասին,

դ) առաջարկությամբ հանդես է գալիս ՀՊՄՀ ՈՒԳԸ-ի խորհրդին մրցանակներ հայտարարելու և ՈՒԳԸ-ի պատվոգրեր, հավաստագրեր և շնորհակալագրեր տալու մասին,

ե) քննարկում և հրատարակության է երաշխավորում հոդվածներ, ուսանողական մենագրություններ, գիտական աշխատանքներ, ժողովածուներ և այլ նյութեր։

զ) լսում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի զեկուցումները ՈՒԳԸ-ի գիտահետազոտական աշխատանքների մասին և տալիս համապատասխան խորհրդատվություններ։

3.24 Գիտամեթոդական խորհուրդի նիստը համարվում է իրավազոր նրա անդամների 2/3-ի ներկայության դեպքում։ Որոշումները ընդունվում են ներկա անդամների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե որոշում չի ընդունվում փակ, գաղտնի քվեարկություն կազմակերպելու և իրականացնելու մասին։ Գիտամեթոդական խորհուրդի նիստերը կարող են անցկացվել առցանց, ինչպես նաև հարցման միջոցով։

3.25 Գիտամեթոդական խորհուրդի արտահերթ նիստերը կարող են հրավիրվել ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի առաջարկով, ինչպես նաև գիտամեթոդական խորհրդի նախագահի և անդամների 1/3-ի պահանջով։ Գիտամեթոդական խորհրդի նախագահը արտահերթ նիստ հրավիրելու վերաբերյալ պահանջը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պարտավոր է ապահովել նիստի գումարումը։

ՆԱԽԱԳԱՀ

3.26 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահը ընտրովի մարմին է, իսկ նախագահի ժամանակավոր պաշտոնակատար կարող է նշանակել ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Ընդհանուր ժողովը։

3.27 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահը ընտրվում է Ընդհանուր ժողովի հաստատած կարգով, երկու տարի ժամկետով։

3.28 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի թեկնածու կարող է լինել ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի ցանկացած անդամ, որն ունի բարձր առաջադիմություն և զբաղվում է գիտական կամ ստեղծագործական գործունեությամբ։

3.29 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահը՝

ա) իրականացնում ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի ընթացիկ ղեկավարումը,

բ) ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի գլխավոր ներկայացուցիչն է ՀՊՄՀ-ում և նրանից դուրս,

գ) համակարգում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի կառուցվածքային միավորների աշխատանքները,
դ) տնօրինում և վերաբաշխում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի ֆինանսական և գույքային միջոցները,
ե) ապահովում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումների կատարումը, իր իրավասության սահմաններում ընդունում է որոշումներ և ներկայացնում վերջինիս համարժեք հանձնարականներ,
զ) պարտավոր է հաշվետվություն ներկայացնել ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի ընդհանուր ժողովի հերթական նիստերում, առնվազն ուսումնական տարին մեկ անգամ: Ինչպես նաև ընդհանուր ժողովի պահանջով ցանկացած արտահերթ նիստում, պարտավոր է հաշվետվություն ներկայացնել ընթացիկ և կատարված աշխատանքների մասին,
է) հրավիրում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Խորհրդի հերթական և արտահերթ նիստեր,
ը) որոշում է կայացնում ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ին անդամագրելու և անդամակցությունից հեռացնելու վերաբերյալ՝ ըստ Ընդհանուր ժողովի հաստատած կարգի,
թ) փոխնախագահներին, խորհրդի քարտուղարին, ՀՊՄՀ ՈՒԳԸ-ի անդամներին սույն կանոնադրության շրջանակներում կարող է փոխանցել նախագահին վերապահված առանձին լիազորություններ,
ժ) ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Խորհրդի նիստի օրակարգում եղած հարցի մասին Խորհրդի կողմից առնվազն երկու անգամ լսելու և որոշում չկայացնելու դեպքում իրավունք ունի կայացնելու միանձնյա որոշում ներկայացված հարցի մասին:

3.30 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի լիազորությունների դադարեցումը՝ մինչև ժամկետի ավարտը, տեղի է ունենաում այն դեպքերում, երբ ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Ընդհանոր ժողովի հերթական կամ արտահերթ նիստի օրակարգում առաջադրված է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի լիազորությունների դադարեցման հարցը ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի ընդհանոր ժողովի անդամների 2/3 և ավել մասի կողմից հետևյալ պատճառաբանություններից որևէ մեկի ներկայացմամբ՝

ա) նախագահի գործունեությունը չի համապատասխանում ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի կանոնադրական նպատակներին կամ խնդիրներին,
բ) նախագահի գործունեությունը վնասում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի բարի համբավը և հեղինակությանը,
գ) նախագահի թեկնածությունը այլևս չի համապատասխանում ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի կանոնադրությամբ սահմանված չափանիշներին:

Վերոհիշյալ պատճառներով հիմնավորված ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի լիազորությունների դադարեցման մասին որոշում է կայացնում ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Ընդհանոր ժողովը, եթե այդ որոշմանը կողմ են քվեարկել նիստին մասնակից ընտրության իրավունքով անդամների 4/5 և ավել մասը

3.31 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի փոխնախագահները՝

ա) կատարում են ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի հանձնարարությունները Ընդհանուր ժողովի նիստում որոշված և յուրաքանչյուրին ներկայացված պարտականությունների շրջանակներում,

բ) ֆակուլտետային ՈՒԳԸ-ների աշխատանքը համակարգող փոխնախագահը ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի հանձնարարությամբ, նրա բացակայության ընթացքում կատարում է ՀՊՄՀ ՈՒԳԸ-ի նախագահի պարտականությունները,

գ) ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի հանձնաժողովների և ակումբների աշխատանքները համակարգող փոխնախագահը ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի հանձնարարությամբ իրականացնում է Ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումների կատարումը՝ կապված հանձնաժողովների և ակումբների հետ,

3.32 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի օգնականները կատարում են սույն կանոնադրության շրջանակներում նախագահի ցանկացած առաջադրանք, օգնում են նախագահին իրականացնել իր գործառույթները: Նախագահի հանձնարարականով իրականացնում են տեղական և միջազգային կապերի հաստատում, բուհերի և գործընկեր կազմակերպությունների հետ: Վերահսկում են քարտուղարության, լրատվության և մեդիահարթակների պատասխանատուների աշխատանքները:

3.33 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի քարտուղարը արձանագրում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի խորհրդի նիստերը և ստորագրում դրանք, տնօրինում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի արխիվը և կատարում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի կողմից իր վրա դրված առանձին պարտականություններ:

ՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ՈՒԳԸ-ՆԵՐ

3.34 Ֆակուլտետային ՈՒԳԸ-ները ձևավորվում են ֆակուտետային ամբիոնների երաշխավորությամբ ներկայացված առնվազն երեք ուսանողներից կամ հետբուհական-շարունակական կրթություն ստացողներից: Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմված է՝ նախագահից, փոխնախագահից, քարտուղարից, լրատվական պատասխանատուից և շարքային անդամներից:

3.35 Ֆակուլտետային ՈՒԳԸ-ն մշակում և իրականացնում է ծրագրեր, որոնք բխում են տվյալ ֆակուլտետի ուսանողների գիտական և ստեղծագործական հետաքրքրություններից և նպաստում են ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացմանը:

3.36 Ֆակուլտետային ՈՒԳԸ-ն.

ա) կազմակերպում է ֆակուլտետային ՈՒԳԸ-ի նախագահի ընտրությունները,

բ) հայտարարություն է տարածում ֆակուլտետային ՈՒԳԸ-ի նախագահի ընտրության մասին, իսկ ընտրության օրը նշանակում ոչ շուտ, քան 10 աշխատանքային օրը և ոչ ուշ քան 15 աշխատանքային օրը՝ հաշված ընտրության հայտարարության հրապարակման օրվանից,

գ) առաջարկություններ է ներկայացնում ֆակուլտետի խորհրդին,

դ) առաջարկություններ է ներկայացնում ՀՊՄՀ-ՈՒԳԸ-ի նախագահին և Խորհուրդին ֆակուտետային ՈՒԳԸ-ի գործունեության մասին:

3.37 Ֆակուլտետային ՈՒԳԸ-ն՝ ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի ղեկավարությամբ նիստում, բաց քվեարկությամբ ընտրում է ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահ, երկու տարի ժամկետով, որը հաստատում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Խորհուրդը:

3.38 Մինչև ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահ ընտրելը, աշխատանքները համակարգում է

ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահը կամ նրա նշանակած ժամանակավոր պաշտոնակատարը։

3.39 Ֆակուլտետային ՈՒԳԸ-ի նախագահը կազմակերպում և ներկայացնում է ֆակուլտետային աշխատանքները, իրականացնում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Խորհրդի և Ընդհանուր ժողովի որոշումները, կատարում ՀՊՄՀ ՈՒԳԸ-ի նախագահի հանձնարարությունները։

3.40 Ֆակուլտետային ՈՒԳԸ-ի նախագահը պարտավոր է մասնակցել ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Խորհրդի նիստերին և պարբերաբար ներկայացնել ֆակուլտետի ընթացիկ և կատարված աշխատանքները։ Իսկ ամեն ուսումնական տարվա ավարտին ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի խորհրդի նիստում ներկայացնել հաշվետվություն։

3.41 Ֆակուլտետային ՈՒԳԸ-ի նախագահի լիազորությունների դադարեցումը՝ մինչև ժամկետի ավարտը, տեղի է ունենում ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի կամ ֆակուլտետային ՈՒԳԸ-ի անդամների 2/3 և ավելի նախաձեռնությամբ հետևյալ դեպքերում՝

ա) նախագահի գործունեությունը չի համապատասխանում ՈՒԳԸ-ի կանոնադրական նպատակներին կամ խնդիրներին,

բ) նախագահի գործունեությունը վնասում է ՈՒԳԸ-ի բարի համբավը և հեղինակությանը,

գ) նախագահի թեկնածությունը այլևս չի համապատասխանում ՈՒԳԸ-ի կանոնադրությամբ սահմանված չափանիշներին։

Վերոհիշյալ պատճառներով հիմնավորված ֆակուլտետային ՈՒԳԸ-ի նախագահի լիազորությունների դադարեցման մասին որոշում է կայացնում ֆակուլտետային ՈՒԳԸ-ի նիստում կամ ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի խորհրդի նիստում, որը հաստատում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Խորհուրդը եթե այդ որոշմանը կողմ են քվեարկել նիստին մասնակից ընտրության իրավունքով անդամների 3/4 մասը։

3.42 Ֆակուլտետային ՈՒԳԸ-ի ցանկացած որոշում, ծրագիր կամ աշխատանքային պլան հաստատում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահը։

3.43 Ֆակուլտետային ՈՒԳԸ-ի նիստերը գումարվում են առնվազն երկու շաբաթը մեկ։ Նիստերը հրավիրվում են Ֆակուլտետային ՈՒԳԸ-ի նախագահի կողմից կամ անդամների 1/2 և ավելիի պահանջով։ Նիստերը իրավազոր են, եթե նրան մասնակցում են անդամների ընդհանուր թվի 2/3 մասը։

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՎ ԱԿՈՒՄԲՆԵՐ

3.44 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի հիմնական հանձնաժողովներն են.

ա) Արտաքին կապերի՝ տեղական և միջազգային համագործակցության։

բ) Լրատվական, տեղեկատվական հարթակների կառավարման և գիտության հանրայնացման։

գ) Որակի վերահսկման, ռազմավարական պլանավորման և ծրագրերի կառավարման։

դ) Դասընթացների, սեմինարների, կոֆերանսների և նստաշրջանների կազմակերպման։

3.45 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի կազմում գործող ակումբներն են.

ա) Զարգացնող և ինտելեկտուալ խաղերի հետազոտման, մշակման և մանկավարժության մեջ դրանց ներդրման մեթոդների հետազոտման ակումբ։

բ) Կրթադաստիրակչական ֆիլմերի և տեսանյութերի ուսումնասիրման և մանկավարժության մեջ կիրառման մեթոդների հետազոտման ակումբ։

3.46 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի հանձնաժողովների ու ակումբների նախագահներին ընտրում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Խորհուրդը, երկու տարի ժամկետով։ Որոնք ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Խորհրդի ամեն նիստում ներկայացնում են իրենց ընթացիկ և կատարած աշխատանքները։

3.47 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի հանձնաժողովներն ու ակումբները իրենց աշխատանքները կատարում են սույն կանոնադրության նպատակի և խնդիրների համապատասխան, ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի և հանձնաժողովների ու ակումբների աշխատանքները համակարգող փոխնախագահի հանձնարարականների համապատասխան և իրականացնում են ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Ընդհանուր ժողովի այն որոշումները, որոնք վերաբերում են իրենց գործառույթներին։

3.48 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի հանձնաժողովներն ու ակումբները իրենց աշխատանքները կազմակերպելու նպատակով գումարում են նիստեր ըստ անհրաժեշտության, սակայն ոչ քիչ քան ամիսը մեկ անգամ։

3.49 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի հանձնաժողովների ու ակումբների գործունեության տարեկան ծրագրերը հաստատում է ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահը։

3.50 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի հանձնաժողովների ու ակումբների կազմում ընդգրկվում են ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի նշանակած անդամներ։

IV ԳԼՈՒԽ.ՀՊՄՀ-Ի ՈՒԳԸ-Ի ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 ՀՊՄՀ ՈՒԳԸ-ի համակիր կարող է դառնալ ցանկացած ուսանող, իսկ անդամ՝ միայն այն ուսանողները և հետբուհական-շարունակական կրթություն ստացողները, որոնց ՄՈԳ-ը գերազանցում է 100 բալանոց համակարգում 70 միջին գնահատականը, ունեն որևէ ամբիոնի երաշխավորություն, ընդունում են սույն կանոնադրությունը և իրենց գործունեությամբ նպաստում են ՈՒԳԸ-ի նպատակների իրագործմանը։

4.2 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ին անդամագրումը տեղի է ունենում տվյալ անձի դիմումի համաձայն, ուղղված ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահին, որի հաստատումից հետո դիմորդը ստանում է անդամության վկայական համաձայն ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Ընդհանուր ժողովի որոշած ձևաչափով։

4.3 ՀՊՄՀ–ի ՈՒԳԸ-ի անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի դիմումի կամ ՀՊՄՀ–ի ՈՒԳԸ-ի Խորհրդի ՝ տվյալ անդամին ՈՒԳԸ-ի անդամությունից հեռացնելու մասին որոշման հիման վրա. ըստ ընդհանուր ժողովի որոշման անդամության կարգի, կամ սույն կանոնադրության 5.5 կետով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար։

4.4 Ամեն ուսումնական տարի վերանայվում է ՀՊՄՀ–ի ՈՒԳԸ-ի բոլոր անդամների անդամակցության հարցը կախված իրենց գործունեությունից և առաջադիմությունից։

4.5 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի անդամն իրավունք ունի՝

ա) ընտրել, ընտրվել և նշանակվել ֆակուլտետային և ՀՊՄՀ–ի ՈՒԳԸ-ի ղեկավար

մարմիններում,

բ) ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել ՈՒԳԸ-ի գործունեության և ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ,

գ) ազատ արտահայտել սեփական տեսակետը,

դ) օգտվել ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի խորհրդատվական, երաշխավորման, տեխնիկական, տեղեկատվական և այլ աջակցություններից,

ե) իրազեկ լինելու ՈՒԳԸ-ի գործունեությունից,

զ) ներկա գտնվել ՈՒԳԸ-ի միջոցառումներին,

4.5 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի անդամը պարտավոր է.

ա) ակտիվ զբաղվել գիտական, հետազոտական գործունեությամբ կամ ընդգրկված լինել այս կամ այն գիտա-կրթական ծրագրերին,

բ) մասնակցել և աջակցել ՈՒԳԸ-ի գործունեությանը,

գ) իր գործունեությամբ և վարքով բարձր պահել ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի հեղինակությունը, առանց ՀՊՄՀ–ի ՈՒԳԸ-ի իրավասու մարմնի կողմից տրված լիազորագրի հանդես չգալ ՀՊՄՀ–ի ՈՒԳԸ-ի անունից,

դ) գործել սույն կանոնադրությանը համապատասխան, կատարել ՀՊՄՀ–ի ՈՒԳԸ-ի կանոնադրական պահանջները և ղեկավար մարմինների որոշումները։

4.6 ՀՊՄՀ–ի ՈՒԳԸ-ն կարող է ունենալ «ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ պատվավոր անդամ» կոչումը, որը շնորհվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ։ Պատվավոր անդամը օգտվում է ՀՊՄՀ–ի ՈՒԳԸ-ի անդամի բոլոր իրավունքներից։

4.7 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի նախագահի երաշխավորմամբ, ՀՊՄՀ–ի ՈՒԳԸ անդամները կխրախուսվեն տարբեր չափի դրամական պարգևատրումներով, պատվոգրերով, շնորհակալագրերով, «ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի Պատվավոր անդամ»-ի կրծքանշանով, սպորտային և մշակութային միջոցառումների տոմսերով, արտաքաղաքային և արտերկրային ուղեգրերով և այլ խրախուսական միջոցներով։

V ԳԼՈՒԽ. ՀՊՄՀ-Ի ՈՒԳԸ-Ի ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի միջոցները գոյանում են ՀՊՄՀ-ի ֆինանսական կամ այլ գույքային հատկացումներից, այլ կազմակերպությունների, հիմնադրամների, բարերարների նվիրատվություններից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից։

5.2 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ն անվճար կարող է օգտվել ՀՊՄՀ-ի գույքային, տարածքային և այլ միջոցներից՝ ռեկտորի կողմից հաստատված որոշման համաձայն ։

VII ԳԼՈՒԽ.ՀՊՄՀ-Ի ՈՒԳԸ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

6.1 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի գործունեությունը կարող է դադարեցվել ՀՊՄՀ-ի գիտական խորհրդի որոշմամբ, Ընդհանուր ժողովի նիստով, բաց քվեարկությամբ, ձայների առնվազն 4/5-ով կամ օրենքով սահմանված կարգով։

6.2 ՀՊՄՀ-ի ՈՒԳԸ-ի գործունեության դադարեցումից հետո նրա ողջ գույքը տրվում է ՀՊՄՀ-ին։